

ՓՈՒՆ ԿԱՐԶԱՊԵՏ
ԻՍԱՍ ՖԱՐԷՍ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՈՒՆԵՑԱՒ ՆԱԽԱԳԱՀ ՍՍՍՏԻ ՀԵՏ

Փոխ վարչապետ Իսաա Ֆարես երեկ այցելեց Դամասկոս, ուր տեսակցություն մը ունեցաւ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի հետ. անոնք քննարկեցին երկկողմանի յարաբերութիւններուն եւ շրջանաւի՛ն վարգաւցումներուն կապուած հարցեր:

ԻՍՐԱՅԷԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ Կ'ԱՄՔԱՍՏԱՆԷ ՍՈՒՐԻԱՆ ԵՒ ԻՐԱՆԸ՝ ՀՐԶՊԱԼԼԱՆ ՁԻՆԵԼՈՒ ԵՒ ՄԱՐԶԵԼՈՒ ՅԱՆՑԱՆՔՈՎ

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Պենիամին Պէն-էլիազար վերահաստատեց, թէ Հրզպայա մեծ քանակութեամբ գէնք եւ գինամթերք ստացած է Իրանէն:

«Ճերուզալէմ» փոքր» օրաթերթին մէջ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ Պէն-էլիազար ըսաւ, թէ Իրան կը գլխաւորէ միջազգային ահաբեկչութիւնը, եւ Հրզպայայի ուղարկած է ութ հազար «Քարիուշա» տիպի հրթիռներ, որոնց հասողութեան մէջ կ'իշխայ ամբողջ հիւսիսային Իսրայէլը, մինչեւ Նահարիա բնակեցման վայրը:

Իրանեան «Շեհապ-3» հրթիռը քիմիական պոու- խով օժտուած է եւ գործնապէս կրնայ հարուածել Իսրայէլի մէջ որեւէ շրջան. Իրան չորս տարիէն պիտի ունենայ կորիզային գէնքեր ալ, ըսաւ Իսրայէլի պաշտպանութեան նախարարը:

Միւս կողմէ, «Հապրէց» օրաթերթը ըսաւ, որ Իրան «օդային կամուրջով մը» հարիւրաւոր թօն կշռող գէնք եւ գինամթերք ուղարկած է Հրզպայայի եւ Լիբանանի մէջ դառնուող յեղափոխութեան պահակներուն:

Այս գէնքերը փոխադրեցին «Անրոնով 124» տիպի հակաօդային օդանաւեր, որոնք էջք կը կատարէին Դամասկոսի օդակայանին մէջ, ըսաւ օրաթերթը, աւելցնելով որ Իրան վերսկսած է Պեքայայի մէջ Հրզպայայի անդամներու մարզումին:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՆ ՈՒ ԱՅԼ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐ ԼՈՒՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱՆ

Գրառական հարցերու ընդհանուր դատախաչ խաչիլի Ռահալ եւ դատախաչ Ռուբոպ Ռեզք երէկ լուսարանական հարցաքննութեան ենթարկեցին ելեկտրականութեան ընկերութեան ընդհանուր տնօրէն Ժորժ Մուսուաւր, Լեոնալիքանահի եւ Պէլրուրի մէջ հոսանքի բաշխումի պատասխանատու Մայաի Ապուլիսուտուր, Հարալի, Հիւսիսի եւ Պեքայայի մէջ բաշխումի տնօրէն Ֆուաւ Մուդանիէն, ընկերութեան աշխատուորներու սենտիքայի նախագահ Էմիլ Ժրիան եւ պետական անկախ վարչութիւններու սենտիքաներու համադաշնակցութեան նախագահ Ֆուաւ Հարֆուշը:

Մուսուաւ հարցաքնն-

նութենէն ետք ըսաւ, որ դատախաչութեան պատահաւորութեան նախագային լրանցեալ Ծաքաօր արարդէն յանձնուած էին անոր, իսկ վճարումները չկատարուներու անուանացանկերը միայն քաղաքագէտներու անուններէն պարունակէր, որպէսզի ըսուի, թէ անոնց նպատակը քաղաքական է:

Ժրիա ըսաւ, որ հարցաքննութեան ատեն կրկնած է երէկուան (նախանցեալ օրուան) իր խօսքերը, իսկ Հարֆուշ յայտնեց, թէ ցարդ ոչ որ գիտէ, թէ ո՞վ հրապարակած է հոսանքի վճարում չկատարող քաղաքագէտներու անուանացանկերը:

Նշենք, որ դատախաչ

Ռահալ Հինգշաբթի օրը լուսարանական հարցաքննութեան հրապարած է ընկերութեան նախագային պատասխանատուները:

Ռահալ հաւատեց, որ հետաքննութիւնը միւշէւ վերջ պիտի հետապնդէ առաւելագոյն արագութեամբ: Ան ըսաւ, որ Մուսուաւէն պահանջած է վճարում չկատարողներու ապրարարագիր տուացածներու եւ այլ անուանացանկեր, որոնց մէկ մասը յանձնուած է:

«Հետաքննութեան հիմնական նպատակն է ստուգել, թէ պետութեան իրաւունքները չվճարողներ» կան, թէ գանձումներուն մէջ թերացում կ'արձանագրուի. ինչ ո՞ւսայքան շատ յետեալ պարտքեր կան եւ ինչ ո՞ւսոնք չեն գանձուած»:

րով յարձակում մը գործելով Համասի Բեթղեէէ-մի կեդրոններու վրայ՝ չորս գոհ պատճառելով:

Համասի պատասխանատուներէն Ապտէլ-ապիվ Ռանթիսի ըսաւ, որ Սաաաա ընտանիքը նստած էր իր բնակարանին մէջ, երբ իսրայէլեան ուղղաթիռները ուժրակոծեցին շրջանը: Բնակարանին մէջ կը դառնէին նաեւ Համասի չորս անդամները, որոնք սպաննուած են ուժրակոծումին: Ռանթիսի աւելցուց, որ Համասի գլխալ թեւը պիտի չմոռնայ անմեղ քաղաքայիններուն սպանութիւնը եւ յարմար պահուն պիտի հակադարձէ, լուծելու համար անոնց վրէժը:

Իսրայէլեան բանակը չհաստատեց ուղղաթիռներով Բեթղեհէմը ուժրակոծելու լուրերը: Զինւորական մը միայն

ըսաւ, որ բանակը սպաննած է Համասի ծայրայեղական մը, որ կը ծրագրէր գործողութիւն մը կատարել՝ Հրէական Ողիմպիականին փակման հանդիսութեան, Յուլիս 23ին:

Թէլ Աւիւի մէջ, ոստիկանութիւնը քակեց յարւած ական մը, որ տուրակի մը մէջ գրուած էր ճամբու մը եզերքը:

Երկուշաբթի գիշերւան պայթումին պատասխանատուութիւնը ստանձնեց Իսլամական Ժիհաա շարժումը: Իրեւ հակադարձութիւն, իսրայէլեան հրասայքները խուժեցին պաղեստինեան շրջանները, ուր ուժրակոծեցին ապահովութեան ուժերու դիրքեր, որոնց կարգին էին Եասէր Արաֆաթի «Ուժ 17»ի դիրքերը: Յարձակումները տե-

Ծար.ը՝ էջ 10

ԱՐՄԷՆ ԽԱԶԱՏՐԵԱՆ
ԿԸ ՀՐԱԺԱՐԻ Հ.Ժ.Կ.ԷՆ

Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահ Արմէն Խաչատրեան երէկ յայտարարեց, թէ պիտի հրաժարի Հայաստանի Ժողովրդական Կուսակցութենէն (Հ. Ժ. Կ.): Պարզաբանելով իր հեռացումին դրդապատճառները, Խաչատրեան մշեց, թէ կուսակցութեան այսօրուան ղեկավարութիւնը կը կիրարկէ կուսակցութեան հիմնադիր Կարեն Դեմիրճեանի սկզբունքներուն եւ գաղափարներուն խորք եւ վտանգաւոր գործելաոճ, կուսակցականներու հանդէպ կը կատարէ քաղաքական հետապնդում, եւ կուսակցութենէն կը հեռացնէ Կարեն Դեմիրճեանի հետ աշխատակցած անդամներ:

Խաչատրեան մաեւ մշեց, թէ կուսակցութիւնը սկսած է գործակցիլ հանրապետութեան ապակայունացման ձգտող ուժերու հետ:

ԹՈՒՐԻՔԻԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԿԱՊԵՐ ՊԻՏԻ ԶՀԱՍՏԱՏԷ՛

Կ'ԸՍԷ ՆԵՃՏԷԹ ՍԵՋԷՐ

Արպիլէյմանական «Կապէթ 525» թերթը հաղորդեց, որ Արր-

պիլմանի խորհրդարանի նախագահ Մուրթուպ Ալեսկերով, Պաքու վերադարձի նախօրեակին, Պոլսոյ «Մարմարա Ռուում-նասիրական Կեդրոն»ին մէջ խօսած է Թուրքիա – Արպիլման յարաբերութիւններուն եւ Լեռնային Ղարաբաղի տագնապին մասին:

Պատասխանելով թղթակիցներու հարցումներուն, Ալեսկերով տեղեկացուցած է, թէ Թուրքիոյ նախագահ Աիմէթ Նեճմէթ Սեւէրի հետ հանդիպումին ընթացքին Թուրքիոյ նախագահը

յայտարարած է, թէ Թուրքիա Հայաստանի հետ յարաբերութիւն պիտի չհաստատէ: Ըստ Ալեսկերովի, նախագահ Սեւէր ըսած է, թէ ժողովուրդը պիտի չնեղէ անոնց, որոնք Հայաստանի հետ կապեր կը ստեղծեն: Սեւէր նաեւ վերահաստատած է Լեռնային Ղարաբաղի տագնապին գծով ալլըրպիլմանական կեցւածքին Թուրքիոյ պօրակցութիւնը:

ԱՆՑՈՒՑԷՔ ԶԵՐ ԱՐԶԱԿՈՒՐԴԸ
BEL AZURի ՍԷՋ
 ՊԱՆՈԿ ԵՈՎԱԺ ԼՈՂԱԽԱՋԱՆ



Մուտքի սակ՝ Յան Կիրակի օրերը, մեծերու 10,000 լ.ո., փոքրերու 5,000 լ.ո.

Յարմար գինը սմաղի ձաշերու վրայ:
 Ժուղիի Սաւահանգիստի մուտքին: Ըեռ. 09 - 937752 - 3

ԿԱՐԶԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ - ԲԱՏՏՈՒՐԱ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Վարչապետ Մարգարեան կ'ընդունի Զատտուրան:

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան երէկ ընդունեց սուրիական խորհրդարանական պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Սուրիոյ խորհրդարանի նախագահ Ապտէլ Քասէր Քատտուրայի:

Վարչապետ Մարգարեան հանդիպումին ընթացքին յայտարարեց, թէ Հայաստան իր մերձաւոր արեւելեան քաղաքականութեան մէջ յատուկ կարեւորութիւն կու տայ Սուրիոյ հետ իր յարաբերութիւններուն: Վարչապետը ընդգծեց, որ հակառակ երկու երկրներու միջեւ գլուհագլխակա յարաբերութիւններու հաստատումին, առեւտրական - տնտեսական յարաբերութիւններու մակարդակը տակաւին գոհացուցիչ չէ:

Սուրիոյ խորհրդարանի նախագահը, համաձայնելով տնտեսական յարաբերութիւններու զարգացման գծով վարչապետի տեսակէտին, յայտնեց, որ միջազգային յարաբերութիւններու մէջ Հայաստանի հետ Սուրիոյ կապերը երկրի առաջնահերթութիւններու շարքին են:

ՕՍԿԱՆԵԱՆԻ ԸՏՏ

Նոյն օրը պատուիրակութիւնը հանդիպում ունեցաւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի հետ: Երկու կողմերը դրական գնահատեցին տնտեսական եւ քաղաքական համագործակցութեան բարձր մակարդակը:

Նախարար Օսկանեան ներկայացուց Լեռնային Ղարաբաղի տագնապին խաղաղ լուծման գործընթացին վերջին զարգացումները, իսկ Քատտուրա ներկայացուց պաղեստինեան շրջանի գրութիւնը:

Սուրիական պատուիրակութիւնը նաեւ աչցելեց Ծիծեռնակաբերդ եւ Ցեղասպանութեան թանգարան: Սուրիոյ խորհրդարանի նախագահը ծաղկեպսակ պետեղեց Ցեղասպանութեան գոհերու լիշատակը յաւերժացնող կոթողին: Թղթակիցի մը այն հարցումին, թէ արդեօք Սուրիոյ խորհրդարանը չի պատրաստուիր պաշտօնապէս ճանչնալու Հայկական Ցեղասպանութիւնը, Քատտուրա պատասխանեց. «Այն ինչ որ գոյութիւն ունի որտիւ մէջ, աւելի ուժգին է քան այն, ինչ որ գոյութիւն ունի թուղթի վրայ»:

ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԱԳԱՀ ՔՈԶԱՐԵԱՆԻ ԵՒ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐՈՒ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ռուպիթ Քոչարեան երէկ ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետութեան Անվտանգութեան Գերագոյն Խորհուրդի քարտուղար Հասան Ռոհանին:

Հանդիպումին ընթացքին, նախագահ Քոչարեան յայտնեց, թէ Ռոհանիի գլխաւորած բարձրատախճան պատուիրակութեան աչցելութիւնը նոր թափ պիտի տայ լոյրը բնագաւառներուն մէջ երկու երկրներու յարաբերութիւններու զարգացման: Նախագահ Քոչարեան նշեց, թէ շրջանային անվտանգութեան աւերչուող խնդիրներուն լուծումը անկարելի է առանց Իրանի մասնակցութեան:

Ռոհանի ընդգծելով երկու երկրներու յարաբերութիւններու բարձր մակարդակը, յայտարարեց, թէ Հայաստան եւ Իրան ունին համագործակցութեան շատ աւելի մեծ ներուժ: Ռոհանի կարեւորեց շրջանային անվտանգութեան եւ կայունութեան մէջ Հայաստանի դերը: Ան ըսաւ. «Ջարգացած Կովկասը մեզի

Ծար.ը՝ էջ 10

ԱՅՍՕՐ ՄԵՐ 7ԴԴ ԷՋՈՎ

ԸՍՏ ԹՈՒՐԸ ՊԱՏՄԱՐԱՆ ԹԱՆԵՐ ԱՔՁԱՄԻ

ԱՐԳԻ ԹՈՒՐՔԻԱՆ ԵՒ ԹՈՒՐԲ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ԽԱԽՏԻՆ ՀԱՅՎԱԿԱՆ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄՈՎ

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԿՈՉ ԿՈՒՂՂԵ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԱՊԱԳԱՅԻՆ ՆԿԱՏԱՄԲ ՎՍԱՀՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ կոչ ուղղեց Լիբանանի երիտասարդության վստահություն ունենալու իրենց հայրենիքի ապագային նկատմամբ, եւ փոխադարձ պարագայում մասնակից դառնալու անոր վերաշինության. վերականգնումին ու արդիականացումին:

Նախագահ Լահուտ ըստ, որ պետական պատասխանատվությունները, ի նշան ըլլան անոնց դիրքերը, պարտաւոր են արտայայտելու երիտասարդներու իղձերն ու կարիքները, համոզիչ պատասխաններ տալու անոնց մտավախութիւններուն ու հարցումներուն, յայտնելու ճշմարտութիւնը եւ անոնց ներշնչելու վստահութիւն, որովհետեւ անոնք են ապագան ու հայրենիքի գոյատեւման խորհրդանիշը:

Այսպիսի վստահութիւն կարելի չէ կերտել առանց ուժեղ եւ կարող պետութեան մը, ուր հիմնական դերակատարը հաստատութիւններն են, իսկ երաշխիքը՝ օրէնքն է, ըստ նախագահ Լահուտ:

Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Շրջանաւարտներու Միութեան պատուիրակութիւնը ընդունած ատեն հանրապետութեան նախագահը անոնց հաւաստեց, թէ կը զգայ երիտասարդներու տառապանքները եւ կը հասկնայ անոնց մտահոգութիւնները, եւ այս պատճառով է, որ անընդհատ կոչ կ'ուղղէ հնարաւորութիւն ստեղծելու պետութեան հաստատութիւններուն, որ կարենան գործել ու տէր կանգնի իրենց օրինական պատասխանատուութիւններուն, հիմնական չափանիշը դարձնելով պաշտօնէայի կարողութիւնները, որովհետեւ ժողովուրդը պետական հաստատութիւններու ծառայութիւններուն գինը կ'ուզէ վճարել տուրքերով եւ ոչ կաշառքով:

Բոլոր պատահածները կը հաստատեն, որ միակ յոյս ուժեղ, արդար, օրէնքի պետութեան կերտումն է, ուր բոլորը, բուրգի գագաթէն մինչեւ վար, պատասխանատու են իրենց գործունէութեան, իսկ եթէ պետական հաստատութիւններուն վարկը չվերականգնէք, ապա բոլոր լիբանանցիները, մեծ ու փոքր, հայրենաբնակ թէ արտերկրի մէջ, պիտի մնան մտահոգ ու անապահով, հաստատեց ան:

Նախագահ Լահուտ հաւաստեց, որ ինք պետական միւս պատասխանատուներուն հետ գործակցաբար պիտի շարունակէ վարչական եւ դրամական բարեկարգումներու երթը, պատասխանատուութեան, հաշուետուութեան եւ օրէնքի գերիշխանութեան վերահաստատումով: Ան նաեւ ըստ, որ առաջնահերթ կը մնան ժողովուրդի ընկերային ու տնտեսական կարիքները, եւ ինք կառչած կը մնայ ընդհանուր եւ անհատական ապաստութիւններուն, աւելցընելով, որ «պիտի շարունակեմ պաշտպանել մարդոց մօտ պետութեան իրաւունքները եւ պետութեան մօտ քաղաքացիներու իրաւունքները»:

Հանրապետութեան նախագահը վերահաստատեց, թէ ինք լուստես է Լիբանանի ապագային նկատմամբ, իսկ շրջանային վարչացումներուն դիմաց Լիբանանի կեցուածքը ամուր է, որովհետեւ անհկա ծնունդն է բոլոր լիբանանցիներուն մօտ գոյացած այն համոզումին, որ այս ռազմավարութիւնը դէպքերու հաստատումով միակն է, որ կը տանի արդար, ամբողջական եւ վերջնական խաղաղութեան:

ՈՒԺԱՆԻԹԻ, ՀԱՆՐՕԳՈՒՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԶՈՒՐԻ ՀԱՐՑԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎ

Ուժանիթի, հանրօգուտ շինութեանց եւ շուրի հարցերու խորհրդարանական խանձախուժը երէկ գումարեց արտակարգ ժողովը, որուն նախագահեց երեսփոխան Մոհամէտ Քապպանի, ներկայութեամբ ուժանիթի եւ շուրի նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալտունի, ելեկտրականութեան ընկերութեան վարիչ խորհուրդի նախագահ Ֆուատ Համուանի, ընդհանուր տնօրէն Ժորժ Մուաուաւի, պետական վարչութեան հսկող կեդրոնական մարմինի նախագահ Ֆուատ Հայտունի եւ քաղաքացիական ծախսերի եւ քաղաքացիական ծախսերի նախարարին կեցուածքին:

Ժողովէն ետք Քապպանի ըստ, որ ներկաները դատապարտած են ելեկտրականութեան ընկերութեան ծախսերի թիւնը երկու հարցի մէջ: Առաջին. հակառակ տարր տարրան ընթացքին ծախսուած երկու միլիարդ ամերիկեան տոլարին, ան չէ կրցած քաղաքացիներուն ապահովել հոսանքը. երկրորդ՝ անհկա ցարդ չէ կրցած կարգի բերել իր գանձումները, որովհետեւ կը գանձէ սպառուած հոսանքի արժէքին կէսը միայն:

Քապպանի ըստ, որ ժողովականները նաեւ հաստատած են, թէ քաղաքական հարաւանքներ ուղղուած են վարկաբեկելու ժողովրդավար վարչաձեւը, անոր ղեկավարները եւ օրինական հաստատութիւնները. ելեկտրականութեան ընկերութեան կարգ մը պաշտօնէաներ նաեւ շարաշար շահագործած են իրենց յատուկ հոսանքի սակերը:

«Նախարար Պալ-

տուն յայտնեց, որ ընկերութեան պաշտօնէաներէն մէկը մէկ տարրան ընթացքին սպառած է 15 միլիոն քիլօուաթ, որ պարզ անձի մը պիտի արժէր երկու միլիոն տոլար», ըստ Քապպանի, ընդգծելով, որ ասոր կողքին վճարումներու հաշուեցոյցները կորօրէն կը ճշդուին:

Յանձնախումբը կառավարութեան թելադրեց գործադրել ընկերութեան պաշտօնէաներուն յատուկ սակերը շնորդ պետական պիւտձէի 75րդ յօդուածը, եւ պարակցութիւն յայտնեց ընկերութեան աշխատատեղերու գործադուրը պօրինի համարած ուժանիթի նախարարին կեցուածքին:

Յանձնախումբը նաեւ յանձնարարեց, որ խորհրդարանը հետեւի ելեկտրականութեան ընկերութեան աշխատանքին, պահանջելով հոսանքի բաշխումի ճշգրիտ ժամանակացոյց մը որդեգրել ու յարգել: Յանձնախումբը նաեւ պահանջեց, որ կառավարութիւնը շարունակէ թէ՛ պետական գանձարկի իրաւունքները, թէ՛ քաղաքացիներու իրաւունքները պահպանող վարչական ու դատական քայլերը, հետաքննութիւն կատարելով հոսանքի գինը չվճարողներու անւանացանկերու հրապարակումին առնչու-

թեամբ, մանաւանդ որ նախարար Պալտունի հաստատած է, թէ անոր ետին կան քաղաքական նպատակներ:

ՊԱՅՏՈՒՆ

Նախարար Պալտունի ըստ, որ ելեկտրականութեան ընկերութեան աշխատատեղերու գործադուրն ու անճիշդ տեղեկութիւններով անուանացանկերու հրապարակումը որոշ նպատակներ կը հետապնդէ, եւ չվճարող քաղաքացիներու մասին տեղեկութիւնները անճիշդ են:

Ան ըստ, որ անուանացանկը հրապարակած է պետութիւնն ու անոր կառոյցները վարկաբեկելու ուղղով, որոշ նպատակներ հետապնդումի կ'ենթարկուի:

Ելեկտրականութեան ընկերութեան տնօրէնութիւնն այսօր պետք է կանգնի իր պարտականութիւններուն, ըստ ան:

ՍՈՒԱՌԱՍ

Ելեկտրականութեան ընկերութեան տնօրէն Ժորժ Մուաուաւի նիւտէն ետք ըստ, որ համաձայն չէ նախարար Պալտունի ըսածներուն, չի բաժնէր անոր կարծիքը, «եւ անոր բոլոր ըսածները սխալով սխալ են»:

ԲԱՆԻ ՍԵ ՏՈՂՈՎ

Յենթի, գործող նախարար Էլիաս Մըր ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէնութեան յիշեց յուշադիր մը, որուն մէջ պահանջեց հետապնդել ինքնաշարժներու հին թիւերը նոր «քոտ»երով չփոխանակած պարագաները եւ դիմել օրինական միջոցառումներու:

ԻՍՐԱԷԷԼԵԱՆ պատերազմական օդանւեր երկ քիչքրեք կատարեցին Հասպալայի եւ Մերձաօդային վերել. իսկ ուղղարկուեց քաղաքի քիչքրեք կատարեցին Մագաբէն Շրպալայի վերել:

ԱՇԾԵԱՆ ԹՈՒՐԶ Շրջապայույններ

8 օր VARN 250\$

8 օր YALTA 570\$

17-27 Օգոստոս Երեւան
Ծաղկաձոր լման
պայույններով
675 եւ 775\$

21-28 Սեպ. Երեւան 635\$

21 Սեպ.-5 Նոյ. Երեւան,
Ծաղկաձոր, Ղարաբաղ
պայույններով 935\$

Ամեն Շաբաթ 8 օր C/S
CONSTANTINA Նաով
Կիպրոս, Ռուսոն եւ
5 կողմեր 399\$

Ամեն Շաբաթ Տամակոս
Սիբուայա Մալուլա
միայն 16\$

Երեւան երթուղարձի
լրում 295\$

Խմբային փոխակ 235\$

Լաքաքիա 3 օր 80\$

Հեռ. 01/240654 - 261177
03/233978

BALKAN Holidays

VARNA
265 \$

Կը ներփակէ՝ Երթուղարձի
տոմս + պանդոկ +
փոխադրութիւն

ՎՃԱՐՄԱՆ
ԴԻԲՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մագրաա, Ուաքք Բոմ շեք,
«Պանք Աուտ»
01-304553/63 - 03-273251

STUDIO Lantern

Կը ստանձնէ
ուրախ
առիթներու
video
նկարահանումներ

Հեռ. 01-266866
եւ 03-995399

ՓՕԼԻԿԼՈԹ

ԱՐՈՒԵՍՏԻՑ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԺԱՐԱՆ

ՎԿԱՅԱԿԱՆԱՑ

ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԵՍ

Հովանաւորութեամբ եւ ձեռամբ
ԱՊՏԵԼ ՌԱՀԻՄ ՄՐԱՏԻ

(Կրթական նախարար)

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 20 Յուլիս 2001,
Երեկոյեան ժամը 8:00ին, ԷԼ - ՊՈՒՍԹԱՆ
ՊԼՆԴՈՒԿԻՆ մէջ. Պէյթ Մէլի:

ՀԱՅԱԿԱՆ ԲԱՐԵՂՈՐԾԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՈՒԹԻՒՆ
ԼԻԲ. ԿՐԹԱԿԱՆ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄ

ARMENIAN GENERAL
BENEVOLENT UNION
EDUCATIONAL
COMMITTEE OF LEBANON

Հ. Բ. Բ. ՍՈՒԹԵԱՆ ԿԱՐԺԱՐԱՆՆԵՐ
ԴԱՐՈՒՇԻ - ՅՈՎԱԿԻՍԵԱՆ (Երկրորդական)
ՊՕՂՈՍ Գ. ԿԱՐՍԻՐԵԱՆ (Միջնակարգ)
ԼԵՈՆ Կ. ՆԱԶԱՐԵԱՆ (Նախակրթարան)

2001 - 2002 ԿՐԹԱԶՐՋԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Բ. Բ. ՍՈՒԹԵԱՆ Լիբանանի սեփական վարժարաններու 2001 - 2002 տարեշրջանի արձանագրութիւնները. մախկին աշակերտներուն համար, երկարաձգուած է մինչեւ 3 Օգոստոս 2001:

Արձանագրութեան սակ՝ 300,000 Լ.Ո.:

Լեւոն Կ. Նազարեան եւ Դարուի-Յովակիմեան վարժարաններու աշակերտները պիտի արձանագրուին «Չապէլ Սովսետեան» կեդրոն, Ա. յարկ (Սիմ Էլ Ֆիլ), Երկուշաբթի, Երեքշաբթի եւ Չորեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8:30էն կէսօրը ետք ժամը 3:00: Հեռաձայն՝ 01 - 481319 եւ 01 - 484196:

Իսկ Պօղոս Գ. Կարմիրեանի աշակերտներուն արձանագրութիւնները տեղի պիտի ունենան Հինգշաբթի եւ Ուրբաթ օրերը, Կարմիրեան վարժարանէն 5525 (Ամբիլիաս), հեռաձայն՝ 04 - 413933 եւ 04 - 522841:

Միայն արձանագրութեան օրերուն կարելի է գեղջի դիմումագիր ստանալու գայն լեցնել ետք, մինչեւ Օգոստոս 17, յանձնել «Չ. Սովսետեան» կեդրոն, Ա. յարկ, տիկին Լուսնակ Նորոյեանի:

Արձանագրուող աշակերտները 2 լուսանկար պէտք է բերեն իրենց հետ:

Հ. Բ. Բ. Ս.Ի ԼԻԲԱՆԱՆԻ
ԿՐԹԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՏԵՍԻԼ

Չորեքշաբթի, 18 Յուլիս 2001, գիշերուած ժամը 10:00ին, դիտեցէք Չաքար Բէշիշեանի (խմբավար «ԿԱՐԿԱՉ» եւ «ԿԱՐԱՆՂԱ» խումբերուն) եւ Լիլիթ Գալուստեանի (Համագային Հայաստանի գրասենեակին տնօրէնուհին) հարցազրոյցը «ԿԵՍ ԳԻԾԵՐԱՅԻՆ ԺԵՊԵՆՈՒՅՑ» յայտագիրէն:

Ա Ֆ Ի Լ

ԻՆԵՆԱՇԱՐԺԻ ԱՊԱՇՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ



85\$

●SOS FREE OF CHARGE
ԻՆԵՆԱՇԱՐԺԻ ՓՈԽԱԳՐՈՒԹԵԱՆ
ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՋՐԻ

ՀԱՍՑԵ. ԱՖԵՏԻ ԶԵՆԵ Բ. ՅԱՐԿ
ՀԵՌ. 01-242556 եւ 01-242557



ՀՐԱՇԱԼԻ ՆՈՐ ԷՐԲՈՆՏԻՍԻՈՆԵ

AUTO RESTART

Իսկական ուժ

Բոլորին մատչելի գինը

Ճափոնական արհեստագիտութիւն

9000ԵՆ 24000 BTU

Պատին, գետնին կամ առաստաղին վրայ
ամրացուող տեսակներու հաւաքածոյ

Հեռ. 04-718444, Ֆաքս. 04-718555

UNILEC
EXCLUSIVE DISTRIBUTOR

ՄԱԿԻ ԽԱՂԱՂԱՐԱՐ ՈՒԺԵՐՈՒՆ
ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԱՌՆՉՈՒԹԵԱՐԲ

ՓՈԽԸՄԲՈՒՆՄԱՆ ՅՈՒՇԱԳԻՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՄԱԿԻ ՄԻՋԵՒ

ՄԱԿԻ ՆԻԼ ԵՈՐՔԻ կեդրոնատեղիին մէջ 12 Յուլի-սին Հայաստանի արտաքին գործոց փոխ նախարար Թաթևու Մարգարեան եւ ՄԱԿԻ գլխավոր քարտուղա-րի խաղաղապահ գործողութիւններու հարցերու տե-ղակալ Մայքլը Շրահան ստորագրած են ՄԱԿԻ խաղա-ղապահ գործողութիւններու համակարգին Հայաս-տանի միացման մասին փոքրամասն յուշագիր մը։

Այդ յուշագիրին ստորագրութեամբ Հայաստան կը դառնայ ՄԱԿԻ խաղաղապահ գործողութիւններու մէջ անմիջականօրէն ներգրաւուած 35րդ պետու-թիւնը եւ պաշտօնապէս կ'արձանագրէ ՄԱԿԻ Ապա-հովորտեան խորհուրդի կողմէ նախաձեռնուած խա-ղաղարար գործողութիւններու համար մինչեւ 116 դի-նուոր եւ սպայ տրամադրելու իր պատրաստակամու-թիւնը։

Այդ գործողութիւններուն հայ խաղաղարարներու մասնակցութեան վերաբերեալ վերջնական որոշում կայացնողը Հայաստանի կառավարութիւնն է։ Յայտ-նենք, որ ՄԱԿԻ միջազգային ուժերը ներկայիս կ'իրա-զորեն 15 խաղաղարար առաքելութիւն, 3րդ Աֆրի-կէի մէջ, 2րդ Ասիոյ մէջ, 3րդ Եւրոպայի մէջ, իսկ 4րդ Միջին Արեւելքի մէջ։

ՄԱԿԻ խաղաղարար գործողութիւններու համա-կարգին Հայաստանի անդամակցութիւնը կրնայ նկա-տելիօրէն բարձրացնել Հայաստանի միջազգային հե-ղինակութիւնը եւ վարկանիշը, ինչպէս նաեւ՝ նպաս-տել հայկական լատինի արդիականացման եւ միջազ-գային չափանիշներուն անոր համապատասխանեց-ման։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է 54,484 ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ

Հայաստանի մէջ 1 Յունիսի դրութեամբ պետական գրանցման վարչութեան մօտ արձանագրուած են 45,347 իրաւաւորական անձեր (որոնց չարքին՝ ձեռ-նարկութիւններ), որոնց մեծամասնութիւնը՝ 22,970ը, սահմանափակ պատասխանատուութեամբ ընկերու-թիւններ են, 8311ր՝ աշխատական ձեռնարկութիւններ, 3803ը՝ արտադրական համագործակցականներ եւ այլն։

Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծա-ռայութեան տուեալներուն, 1 Յունիսի դրութեամբ Հայաստանի մէջ կայ 54,484 արձանագրուած անհատ ձեռնարկատէր։ Այս ժամանակաշրջանին լուծար-ւած են 2467 իրաւաւորական անձեր եւ 11,541 ան-հատ ձեռնարկատէրեր։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՂԱՏԱԽԱՋՆ ԿԱՐԳԱՐՈՒԹԵԱՐԲ

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹԵԱՆ
ՄԷՋ ՉԱՐԱՇԱՀՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ
ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՍՏԵՂԾՈՒՄ

13 Յուլիսին Հայաստանի գլխավոր դատախազ Արամ Թամազեան յառաջացուցած է յանձնախումբ մը, որ պի-տի ստուգէ Հայաստանի նախագահին կից Մարդկային Իրաւանց յանձնախումբի նախագահ Պարոյր Հայրիկ-եանի կողմէ հրապարակուած՝ զինուորական դատախա-զութեան համակարգին մէջ տեղ գտած չարաշահում-ներուն մասին տեղեկութիւնները, ինչպէս նաեւ բռնա-րարքներու հետաքննութեան ձեռնարկելու վերաբերեալ քաղաքացիներուն դիմումները։

Ա. Թամազեան լրագրողներուն հետ գրոյցի մը ըն-թացքին նշած է, որ նման դիմումներ եղած են ո'չ միայն զինուորական դատախազութեան, այլեւ՝ դա-տախազութեան այլ մարմիններու եւ ներքին գործոց համակարգին հետ կապուած։ Գլխավոր դատախազը չէշտած է, որ ընթացք կը արուել վերոյիշեալ բնոյթի որեւէ դիմում, բոլորքի եւ յայտարարութեան։

Ըստ Ա. Թամազեանի, այժմու զինուորական դա-տախազ Գաբրիէ Զհալիկեանի պաշտօնավարման ժա-մանակաւոր զաղրեցման մասին խօսիլը կանուխ է, որովհետեւ անհրաժեշտ է կատարել մարդջական բնուածութիւններ, որոնք իրենք արդիւնք՝ կարելի պի-տի ըլլայ որոշ հետեւութիւններու յանգիլ այդ հար-ցին վերաբերեալ։

ՀԱՅ-ՉՈՒԻՑԵՐԻԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱԽԱՋԵՈՒԹԵԱՐԲ

ԲԸՁՄԱԸԻՂ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԽՐԱՍՈՒՄՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

«Վարդան Միմարքեւ եւ ընկերներ» գործարարնե-րու խումբը գույնգերական «Ֆրանք Միւլէր» ընկե-րութեան հետ Հայաստանի մէջ միացեալ ընկերութիւն մը ստեղծել է։ Անոնք Հայաստանի մէջ պիտի իրա-կանացնեն նաեւ այլ ծրագիրներ, որոնց իրագործու-մը պիտի ստեղծէ չուրջ 1000 աշխատատեղ։

«Նոյնեմ» տապալն» լրատու գործակալութեան թղթակիցը Հայաստանի արդիւնարերութեան եւ առեւտուրի փոխ նախարար Տիգրան Դաւթեանի հետ ունեցած է հարցազրոյց մը, որուն ընթացքին փոխ նախարարը ըսած է, թէ ընկերութեան չէնքի վերա-տորոգութեան աշխատանքները արդէն աւարտած են։ Ան նշած է, թէ կը նախատեսուի չէնքին զանազան յարկերուն մէջ կազմակերպել հիւսուածեղէնի, ոս-կեղործութեան, գարդաշինութեան, կաշեգործու-թեան եւ ժամացոյցներու արտադրութեան վերաբե-րող աշխատանքներ եւ ծրագրեր։ Ըստ Տ. Դաւթեա-նի, արդէն ընկերութիւնը հանգրուան առ հանգըր-ւան կ'օգտուի յատուկ սարքերով եւ առարկաներով։ Ծառաջիկայ տարը օրերուն Հայաստան պիտի բեր-ւին նաեւ ոսկերչական արտադրութիւններու անհր-աժեշտ սարքաւորումներ, իսկ աւելի ուշ՝ ժամա-գործութեան անհրաժեշտ սարքեր։

Ընկերութեան հիւսուածեղէնի բաժինը արդէն սկսած է գործել, իսկ ոսկերչական մասին մէջ կը նա-խատեսուի բանալ մօտաւորապէս 250 աշխատատեղ։ Փոխ նախարարը նշած է, թէ նախարարութիւնը բոլոր ձեւերով պիտի աջակցի «Վարդան Միմարքեւ եւ ընկերներ» խումբին՝ անոր դիմագրուած դժուա-րութիւնները հարթելու համար։

ՀԱՐՅԱԸՐՈՅ

ՄԱՐՍԷՅԻ ՃԵՄԱՐԱՆԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՍՈՒՐԷՆ Մ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՀԵՏ

26ԵՆ 28 Մայիս Անթիլասի մէջ Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ սրբալոյս Սիւռնի օրհնութեան եւ չարք մը այլ եկեղեցական ձեռնարկնե-րու մասնակցութեան համար կարճ ժամանակով Լիբանան կը գտնուէր Համագալիքի Մարտի ճեմարանի շինութեան հանգանակի կեդրոնական մարմնի ատենապետ Սուրէն Սարգիսեան։ «Ազգայ», այդ պատեհ առիթը օգտագործելով, տեսակցութիւն մը ունեցաւ Սուրէն Սարգիսեանին հետ՝ մօտեւ ծանօթանալու համար Մարտի ճեմարանի շինութեան աշխատանք-ներուն։

ՀԱՐՅՈՒՄ.- Համագ-գայինի Կեդրոնական Վարչութիւնը մամուլին միջոցով տրուած հա-ղորդագրութեամբ հաւ-րութիւնը տեղեկ պա-հնց Մարտի ձեմարա-նը նոր կառուցով մը օժ-տելու իր ծրագիրին ու այս ծիրին մէջ քաղաքա-պետութեան կողմէ այդ նպատակին համար տրա-մադրուած հողաշերտին մասին. այսօր այդ հա-ղորդագրութեան շուրջ մէկ տարի ետք արդեօք կարելի է գիտնալ թե ո՞ր հասած է այդ ծրա-գիրը։

ՊԱՏԱՍԽԱՆ.- Զեք հարցումին պատասխա-նելէ առաջ, պարտք կը զգամ շնորհակալութիւն յայտնել այն բոլոր բա-րեբար - նուիրատուե-րուն, անձնաւորութիւն-ներուն, պետական պատ-կան մարմիններուն եւ յանձնախումբներուն, Շի-նութեան գործադիր մարմինի անդամներուն, շինարարական ու կեդ-րոնական հանգանակիչ գոյց յանձնախումբներու եւ մասնաւորաբար ձե-մարանի տնօրէնութեան ու վարչական խորհուր-դին, որոնք ջանք չխնա-յցքին իրենց կարելիու-թեանց սահմաններուն մէջ օգտակար ըլլալու եւ սատարելու այս ծրագրի յաջողութեան։

Ինչպէս գիտէք, ներ-կայիս Մարտի ձեմարա-նը կը գտնուի երեք յար-կանի անհրապոյր սեփա-կան շէնքի մը մէջ, որ դժբախտաբար չամբող-ջացներ դպրոցական կա-ռոյցի մը պայմանները, սակայն հոն տեղաւոր-ւած են 10 դասարան-ներ, գրասենեակներ, յա-նոցից բաժիններ, խոհա-նոց ու ճաշարան, չուրջ 500 քառ. մետր ընդհա-նուր տարածքով, շին-ւած 800 քառ. մետր տա-րածութեամբ հողի մը վրայ։

Մարտի քաղաքապե-տարանէն 99 տարուան, ձեմարանին համար արամագրուած 7400 քառ. մետր տարածու-թեամբ, ճիշդ ներկայ դպրոցին կից հողաշե-րտին մէկ կողմին վրայ է, որ միացեալ դասարան-ները գետեղուած են առ-ժամաբար, եթէ ընկի-շինուած պատրաստի ու շարժական սենեակներու մէջ։ Սակայն նոր դպրո-ցը պիտի ունենայ այդ հողաշերտին վրայ 3300 քառ. մետր մակերես հա-շուով, երկարականի, նուազագոյն ծախսերով ապահովուած, լման հա-մալի մը պետական եւ կրթական բոլոր պայ-մանները լրացնող կա-ռոյց մը՝ յարմար խաղա-վարով, մարզադաշտով, պարտէզներով, կառա-տուով, պահակատու-նով եւ այլ պահանջուած սարքաւորումներով։

Յունիսի վերելաորու-թեան կամ Յուլիս ամ-սուն յանձնառու ճար-տարապետական գրասե-նակը կ'աւարտէ մանրա-մասնուած յատակագը-ծային ու շինարարական ծրագրային աշխատանք-ները, կառուցման պա-հանջուած նիւթերու ցանկերն ու անոնց յատ-կորոշումները։ Յաջոր-դաբար եւ անմիջապէս ճարտարապետներն ու մեր Շինարարութեան Յանձնախումբը գոր-ծակցաբար Մարտի մէջ պիտի հրաւիրեն զանա-զան շինարար կապալա-հաններ՝ անոնցմէ առա-ջարկներ ու գինքեր պա-հանջելու եւ այս բոլորին ընդմէջէն յարմարագոյն-ները գտնելու, որպէսզի Օգոստոս ամսուն սկսինք շինարարական աշխատանքներուն։

Հ.- Այս առիթով նա-եւ նշում եղած էր որ պի-տի կատարուի ժողովըր-դային հանգանակու-թիւն այդ ծրագրի իրա-զորման համար, որուն իրենց հովանաւորու-թիւնը տուած էին Հա-յաստանեայց եկեղեցւոյ երկու կաթողիկոսները եւ հայ թէ ֆրանսացի եպիսկոպոս Ֆրանսուա Թիւրնի, արդեօք ի՞նչ փուլի մէջ կը գտնուի հանգանակութեան գոր-ծը, շինութիւնը որքա՞ն պիտի արժէ ու այլ զու-մարէն ցարդ որքա՞ն հաւաքուած է։

Պ.- Շինութեան գոր-ծարար մարմինի կողքին, Փարիզի մէջ գործող մեր կեդրոնական հանգանա-կիչ յանձնախումբը, Մարտի ձեմարանի վարչական խորհուրդին հետ գործակցաբար, աւե-լի քան մէկ տարի մա-րակրկիտ կերպով աշխա-տեցաւ հաւաքելու Ֆրանսաիս եւ այլ եւրո-պական երկիրներու ու մասնաւորաբար Ֆրան-սայի՝ յատկապէս Փարի-զի ու Մարտի մէջ ապ-րող ու գործող հազարա-ւոր հայ ընտանիքներու եւ հայորդիներու ան-հանգանակներ, անոնց ստուգուած հասցէնե-րով, պատրաստելու հա-մար հանգանակութեան ընդհանուր ծրագրին ու անոր գործադրութեան հանգրուանները։

Նոյն այս աշխատա-նքին կողքին անոնք ու-սուծման սարքերն ու եւ խնամքով պատրաստե-ցին ներկայանալի, ճաշա-կաւոր թղթածրարներ, թերթիկներ եւ թուղթիկ-ներ՝ հայերէն, ֆրանսե-րէն եւ անգլերէն լեզու-ներով, ցրուելու համար հայ ժողովուրդի զանա-զան խաւերուն՝ բարե-րարներու, բարեկեցիկ նուիրատուներու, հայ գիրն ու դպրոցը սիրող ու զննատող հայորդի-ներու, հայկական կազ-մակերպութիւններու, միութիւններու եւ բարե-գործական հաստատու-թիւններու, հայկական ու միջազգային ֆոնտե-րու, պետական որոշ գրասենեակներու, ձե-մարան հովանաւորող հայ թէ օտար անձնաւո-րութիւններու, ձեմարա-նականներու, Հիւսիսա-միջին Ամերիկայի, Անգլիոյ,

ՎԵՐՅՈՒՇ ԱՐ

ԱՄՕԹԽԱԾՈՒԹԵԱՐԲ ԵՒ ՄԱՍԱՐԲ ՆՈՐԻՆ...

Երբ կը մտածեմ մօտիկ անցեալի, մեր շրջանակին անցողաբարեւ թխած միա-միտ ու անմէկ երեւոյթներու մասին, ծի-ծաղելու եւ տրտմելու հակառակ մտաւոր-թիւն մը կ'օրօթէ զիս, լա՛ւ, թէ խնդալ՝ կ'ըսեմ այս տրամադրութեան։

Ու կ'արժէ քիչ մը լալ, քիչ մըն ալ խնդալ ձա-խորդ նկատուած սա օրերուն, յիշելով քաղցրու-թիւնը, անցեալի պարզ մարդոց պարզունակու-թիւնը։ Ըսեմք, թէ հարցը կը վերաբերի ԱՄՕԹ-խԱԾՈՒԹԻՒՆ թեմային։ Այո, ժամանակին ամօթաճոթիւնը յատուկ արժէք ունէր, ու այ-սօր կ'արժէ զայն գլխազիրով արձանագրել։

* *

1955 կամ 1956 թուականն էր, Պորճ Համու-տի «Յ. Տէր Մելքոնեան» սրահը կիսաւարտ էր, բայց մշակութային կամ այլ կարգի ձեռնարկ մը կատարելու համար հանդիսականներ կը հրա-ւիրուէին հոն։

Համագալիքի Պորճ Համուտի մասնահիւղի վարչութիւնը, որուն ատենապետը էր տոքթ. Զ. Մկրեան, մշակութային ձեռնարկ մը կազմակեր-պած էր (այդ օրերուն Պորճ Համուտի մէջ կը գործէր միայն մէկ մասնահիւղ)։ Յայտագիրին վրայ կային խմբերգներ, արտասանութիւն, հա-կական պար եւ... բեմապար-ՊԱՆԷ։

Սրահին առաջին կարգին նստած էին այդ օրե-րու ազգային մեր կեանքին մէջ դերակատարու-թիւն ունեցող ազգայիններ, հոգաբարձուներ, թաղական խորհուրդի անդամներ։ Սրահը լեց-ւած էր ծայրէ ծայր. արժողուն շարուած էին կողք-կողքի եւ հանդիսականները հետաքրքրու-թեամբ կը հետեւէին գեղարուեստական յայտա-գիրին։

Վերջին ելոյթը ունեցաւ այդ օրերուն ՊԱՆԷի դասերու հետեւող սկսնակ պարուհի մը, փոքրա-հասակ, մաքրիկ պարսն մը՝ Սոհիա Փոլատ-եան։ Բեմապարի յատուկ ճերմակ, փրփրոտ զգեստաւորում մը, ըստ դասական պարի պար-տադրանքին, շատ կարճ փէշով, հոլանի։ Բե-մադրուած «Կարապի լիճը» չէր մընուշտ, բայց պարսն պարուհին սպիտակ կարապի երեւոյ-թը առած էր բեմին վրայ։ Ներկայ հանդիսա-կանները առաջին անգամ ըլլալով նման ներկա-յացում մը կը դիտէին մեծ հետաքրքրութեամբ։ Կը գարսնային, թէ Համագալիքը մշակութա-յին նորութիւններ կը բերէր այդքան համարձա-կութեամբ, անտեսելով շրջանի բնակչութեան պահպանողական հոգեբանութիւնը։ Իսկապի-տաւորները հաճոյքով կը դիտէին կիսաւարտ ու դեռ անհրապոյր բեմին վրայ երեւցող զար-մանակ պարը։ Եւ ո՞վ էր արդեօք այդ հայ աղ-ջիկը, որ կը ցատկերտէր բեմին մէկ ծայրէն միւ-սը, բաց բազմակերպով եւ զրեթէ տնիկ սրունքնե-րով, ամենայն համարձակութեամբ։ Ծափահա-րութիւնները շերտ էին ու երկար... Արդիական ներկայացում մը, անհախճաբար՝ Պորճ Համու-տի մշակութային կեանքին մէջ։

Ներկայներ մեկնեցաւ յիշատակելի երեւոյ մը պարած ըլլալու գոհունակութեամբ։ Բայց հարցը նոյնը չէրաւ առաջին կարգի վրայ նստած թաղական խորհուրդի կարգ մը անդամներուն համար, որոնք զոյնները հակած, աչքերը փա-կած, ընդզգած, գայթակղութիւն որակեցին եղա-ծը, նոյնիսկ՝ անցերէն. Համագալիքի նման մշակոյթ տարածող միութեան մը։ Անցերէնի որակեցին մերի սրունքներով աղջիկ մը բարձ-րացնլ բեմ. ծա-խարկ, քաջալերել։

Պահպանողական հայեր էին անոնք, որոնք կը ջանային պահպանել աւանդութիւնները, նոյ-նիսկ արուեստին համար ներքին չհամարելով բեմապարի մը յարմար բաց արուցներով, հոլա-նի լանջերով ու տնիկ բազմակերպով ցուցադրու-թիւն մը։ Այդ մարդոց համար սրբազան պարտա-կանութիւն մըն էր պահպանումը մանաւանդ հայ իսկ հագուստ-կապուստի պատշաճ սահմաննե-րու յարգումին։

Դիտողութիւններ, բնադատութիւններ հա-սան Համագալիքի Պորճ Համուտի մասնահիւ-ղի հասցէին։ Վարչութիւնը ծախով ու դիտորեց այդ ամենը, որովհետեւ իր նպատակն էր գեղար-ւեստի մշակումը, փոխանցումը նոր սերունդին, օրուան արուեստի նորութիւններուն հետ քալ պահելու նախաձեռնողութեամբ։

Եթէ գեղարուեստական ներկայացում մը գալ-թակողութիւն նկատող մեր այդ օրերու հայերը կամ ազգայինները այսօր մեր մէջ գտնուած ըլ-լային, արդեօք իրենց աչքերը պիտի փակէի՞նք օր ցերեկով մեր շուկաներուն, մեր ճամբանե-րուն եւ փողոցներուն մէջ շրջապայող կիսաւերկ երիտասարդութիւններուն, ոչ միայն ուս ու լանջ-քը հոլանի, այլեւ պարտը բաց աղջիկներուն յանդգնութիւնը տեսնելով։ Ամօթաճոթեան նշոյն իսկ անտեսած ներկայի իսկական սեղի-քը հոլանի, այլեւ պարտը բաց աղջիկներուն յանդգնութիւնը տեսնելով։ Ամօթաճոթեան հա-մաձայն, այլապէս դպրոցը լուրջ դժուարու-թիւններու առջեւ կրնայ դրուիլ։

Հ.- Ի՞նչ հետաքրքրու-թիւն ցոյց կու տայ ֆրանսահայ գաղութը այս ծրագրի նկատմամբ։

Ի՞նչ ակնկալութիւններ ունիք եւրոպայի հայու-

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ, ԴԺՈ՛ԽՔ

Հայրենի «*Հայոց Աշխարհ*» թերթը իր 12 Յուլիսի թիւով մ'անրամասնութիւններ հաղորդած է այն սարսափելի ոճերին մասին, որ 10 Յուլիսին տեղի ունեցած է Երեւանի հարաւ-արեւմուտքը գտնուող «*Պանկլատէշ*» թաղամասին մէջ։

Ոճերին գոհ գացածներու հարազատներէն եւ դրացիներէն քաղելով իր տեղեկութիւնները՝ թերթը կը յայտնէ, որ դէպքէն քանի մը օր առաջ ոճրային արարքի գլխաւոր գոհ Վարդան Յովհաննիսեան ծախած է իր ինքնաշարժը՝ անկէ գոյացած գումարը առեւտրական նպատակներով գործածելու համար։

Ինքնաշարժը ծախելու մասին տեղեակ եղած է իւրեւ Վ. Յովհաննիսեանի ընկերը ճանչցուած Մաւուէկ Պետրոսեան, որ քանի մը անգամ այցելած է գոհին բնակարանը, եւ վերջինս քանի մը անգամ դրամական օգնութիւն ցուցաբերած է Մ. Պետրոսեանին։

Վ. Յովհաննիսեանի բնակարանը կատարած իր քանի մը այցելութեան ընթացքին Մ. Պետրոսեան քմեցուցիչ գործածողի տպաւորութիւն ձգած է գոհին հարազատներուն վրայ։ Յանցագործը դէպքէն քանի մը օր առաջ դարձեալ դրամ ուզած է գոհէն։ Այդ օր Վ. Յովհաննիսեան իր ընկերներէն մէկէն առած էր «Կազ 3110» մակնիշի ինքնաշարժ մը՝ հանգիսիսու համար Մ. Պետրոսեանին։ Վերջինս սպաննած է Վ. Յովհաննիսեանը եւ դիակը դրած է ինքնաշարժի սնտուկին մէջ։ Չի բացառուիր, որ Մ. Պետրոսեան իր ոճրային արարքը գործած ըլլալ քմբեցուցիչի ազդեցութեան տակ։

«*Հայոց Աշխարհ*» կ'աւելցնէ, որ այնուհետեւ ոճրագործը *Թաքսիով* վերադարձած է Վ. Յովհաննիսեանի տունը, ուր տնեցիները կը սպասէին գինք (ան հետաձայնած էր եւ յայտնած, թէ քան մը առնելու համար կու գալ)։

Տան մէջ կը գտնուէին գոհին գորակըչ, կինը եւ երկու գտակները, քոյրը, քրոջ աղջիկը եւ վերջինիս երեքամեայ դուստրը։ Ոճրագործը տուն մտած է եւ համոզուելով, որ դուռը արդէն փակ է, աւըր-ճանակով սպաննած է Վ. Յովհաննիսեանի գոքանչը՝ Ամալիա Մեյքրեանը։ Վ. Յովհաննիսեանի քրոջ աղջիկը՝ Գալիանէ Վարդանեան փորձած է բռնել ոճրագործին ձեռքերէն, բայց վերջինս աւրճանակէն արձակուած կրակոցով վիրաւորած է անոր ոտը եւ դստակով քանի մը անգամ հարուածած է անոր ձեռքերուն եւ կրծքավանդակին։

Այնուհետեւ Մ. Պետրոսեան տանտիրուհիէն դրամ պահանջած է։ Մարիամ Մեյքրեանէ բաւարարած է ոճրագործին պահանջը՝ անոր յանձնելով տունը գտնուող գումարը եւ գարդեղիները, սակայն, հալեաաակ այս իրողութեան, Մ. Պետրոսեան անոր աղբորնակի հարուածներ հասցուցած է պատճառելով ծանր մարմնական վնասներ։ Թժիշկներով վկայութեամբ, ան կրնայ փրկուիլ, սակայն հաշմանդամ կը մնալ՝ մեշքէն ստացած դանակի տասէն աւելի հարուածներուն պատճառով։

Յոցեացգործը չէ խնայած նաեւ տան մէջ գտնուող մանուկները։ Տակաւին կարելի չէ եղած ձերբակալել ոճրագործը։

«*Հայոց Աշխարհ*» նոյն թիւով հրատարակած է այս դէպքին անդրադարձող ստորեւ տրուած ակնարկը։

Սարսափելի բաներ են, այնուամենայնիւ, կատարուում այս աշխարհում։ Դրանցից շատերի մասին աւելի լաւ է չիմանալ ընդհանրապէս։ Բայց ի՞նչ մարդիկ են, սակայն, նման յանցագործութիւնների գնացողները։ Անկասկած վաճառել են նրանք սեփական հոգիները մարդկային ցեղի թշնամուն։ Անկասկած...

Թուում էր, թէ արդէն ամէն ինչի վարժուել ենք։ Յաւի սահմանադիր Հասարակութեան մէջ բարձրացել է, եւ հայրենակիցներին նեարդերն օրրոսօրէ ամբարնում են։ Տպաւորութիւն էր ստեղծուում, թէ մեզ կարելի է ցնցել միայն տիեզերական հրդեհով։ Սակայն վայրի յանցադործութիւնը «Պանկատէշ» Թաղամասում, որի հետեւանքով սպաննուեցին երկու եւ վիրաւորուեցին հինգ մարդ (այդ թւում՝ երեք երեխայ) շուտրեցրեց բոլորին եւ ստիպեց խորհել շատ բաների մասին։ Տիուր բաների։

Նախ եւ առաջ այն մասին, որ մենք, որպէս ազգ, սահուն կերպով անցնում ենք բոլորովին այլ օրակի։ Մասնագէտները մի եզր ունենւ. անմոխա։ Դա ազդի բարոյական րոտի քաջացումն է. երբ պատմութեան թատերարեմ են ելնում սկզբնական ազգային «նիւթին» գնալով աւելի ու աւելի քիչ նմանողող մարդկային նորագոյացութիւնները։ Մեր առջեւ հենց այդ դէպքն է որ կայ։ Շատ րանի է ունակ հայր։ Շատ սրիկայութիւններին։ Բայց մորթել փոքր, անմեղ երեխաներին... Կարծում եմ, սա ահագանգ է մեզ բոլորիս։ Հասարակութիւնը պիտի ողջ մաշկով զգայ յանկարծակի վրայ հասած ցուրտը, նոր սառցադաշտի դանդաղ սողալը։

Ամէն ինչի պիմաց վաղ թէ ուշ հարկ է լինում վճարել։ Կեանքն սկսում է մեզ հաշիւ ներկայացնել մերձաւորի նկատմամբ անտարբերութեան, ազգային աւանդութներից հրաժարման, հոգեւոր արժէքների ծանակման, կեղծիքի, գողութեան, ստորութեան տասնամեակի համար... Համաձայնէք, մենք շատ ենք փոխուել եւ եկել է վճարելու ժամանակը։ Թա՛նկ վճարելու։ Մեր բարոյական խանգարման դիմաց։

Բոլոր հին հանրագիտական լաւաւրաններում կայ «բարոյական խանգարում» յօդուածը։

«Բարոյական խանգարում։ Հոգեկան հիւանդութիւն, որի դէպքում բարոյական պատկերացումնեբը կորցնում են իրենց ուժը եւ դադարում հանդիսանալ պահուածքի զրգապատճառ։ Բարոյական խանգարման պարագայում մարդը անտարբեր է դառնում չարի եւ բարու նկատմամբ, չկարքնելով, սակայն, դրանց տեսական, ձեւական տարբերակման ունակութիւնը։ Անբուժելի է»։

Կրկնում եմ, մինչ յեղափոխութիւնը դա կար ըո՛

լոր հանրագիտարաններում։ Ցետոյ անհետացաւ։ Գուցէ մե՛նք բուժուեցինք։ Իսկ գուցէ եւ հիւանդները ընկալուեցին որպէս ճնշող մեծամասնութիւն, եւ այն, ինչ համարւում էր հիւանդութիւն, դարձաւ ընդունուած կարգ։ Իսկ խելագար այսօր համարում են նրանց, ում համար բարոյական պատկերացումները չեն դադարել լինել պահուածքի զրգապատճառ։

Ուզում ենք մենք դա թէ ոչ, բայց այսուհետ պիտի հաշուենք այն մտքին, որ Հայաստանը դաժան երկիր է, եւ մարդկային կեանքն այստեղ ոչ մի արժէք չունի։ Եւ որ վաղը կարող են սպաննել իւրաքանչիւրիս. բնակարանի, 1000 դրամի, այն բանի համար, որ ընդզգեղ են լիտիութեան դէմ, մի կողմ չես քաշուել ճանապարհից... ամէն ինչի համար։

Ստացուել է այնպէս, որ տանս կողքին միանդամից մի քանի պար, ճաշարան, քաղինօ կայ։ Եւ գրեթէ ամէն գիշեր մեր աչքի առաջ ծաւալւում են հարբած, արինալից տուրոււտփոցներ։ Տեսնել է պէտք, թէ ինչպիսի՛ յիւրաւի կենդանական ատելութեամբ են մարդիկ նետուում միմեանց վրայ, ինչպէս են աամներով պատառուտում դիմացիին։ Իմ ժամանակներում ծեծկռտուքներն աւելի քիչ չէին։ Բայց չկար նման ատելութիւն միմեանց նկատմամբ։ Մենք շատ ենք փոխուել այս տանը տարուալ ընթացքում։

Ինչհէ։ Ի՛նչ էք կարծում, ո՞վ է գլխաւոր առւժոդը «Պանկլատէշ» Թաղամասում կատարուած իրադարձութիւնների արդիւնքում։ Ոչ, հանգուեցալսեբր չէն։ Նրանց համար արդէն միււնոյն է, նրանք այնտեղ են՝ սահմանից անդին։ Իսկ երեխաները, որոնց աչքի առջեւ կատարուեց ողբերգութիւնը, այստեղ են։ Եւ կեանք ունեն ապրելու։ Հարցն այն է՝ ի՛նչպէս։ Կեանքը նրանց բաժին հանեց իր ողջ դաժանութիւնը։ Եւ իմաստ չունի բացատրել նրանց, թէ կեանքը ի՛ է բազում անակնկալներով, որ ամենեւին էլ բարին չի յաղթում այս աշխարհում։ Չարիքը չսպասեց, մինչեւ երեխաները մեծանան։ Եւ ինչպէս էլ որ դասաւորուի հետագայում այդ երեխաների ճակատագիրը, չարիքը նրանց վրայով արդէն անցել է։ Գլանի պէս։ Եւ նրանք դա կը իշէն։

Յանցագործին, ի հարկէ, վաղ թէ ուշ կը բռնեն։ Տեղ չունի փախչելու։ Եւ կը դատեն։ Գուցէ եւ դատապարտեն մահապատժ։ Ախ հա՛, քիչ էր մնում մոռանալի, Հայաստանը հրաժարւում է մահապատժից։ Սակայն վախենամ, որ դրան անխուսափելիօրէն փոխարինելու գալ ինքնադատաստանը։ Մահապատիժը, անկասկած, չարիք է։ Բայց ինքնադատաստանը՝ անհամեմատ աւելի մեծ, վտանգաւոր, համաճարակ դառնալու ունակ չարիք։ Մենք սովորել ենք երկու չարիքից ընտրել նուազագոյնը եւ միշտ դեկափարուել այդ սկզբունքով։ Այսօր այլ կերպ է. Հայաստանը՝ ինքը երկու չարիքից ընտրում է առաւել մեծը։

Բարի գալուստ, դժոխք։

ԳԱԳԻԿ ԿԻՐՏՉԵԱՆ

«Հայոց Աշխարհ»

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ Մ. ԵՒ Հ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՓԱՅՈՒՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՊԱՔԱՆՈՐԷԱՅԻ ՔՆՆՈՒԹԵԱՆ

Համապգայինի Մ. եւ Հ. Արսլանեան ձեւարանի 2000-2001 տարեշրջանի աւարտական դասարանի 22 աշակերտներէն 17 յաջողած են Ֆրանսիանի պաքալորէայի քննութիւններուն (77,3%)։ 17 յաջողածներէն 4ը արժանացած են յիշատակութեան (1 շատ լաւ, 1 լաւ, 2 բաւական լաւ)։ Ստորեւ անունները։

Իմաստասիրութիւն (6 աշակերտներէն 6ը).- Պետրոսեան Բալիկ, Տէմիրձեան Թամար, Էթեմչեան Շանթ, Ճերճեան Յովինի, Մարգարեան Հուրի եւ Սալխանեան Թամար։

Ընդհանուր գիտութիւն (12 աշակերտներէն 8ը).- Նաճարեան Անի, Բարմաքսըվեան Ալին, Սարգիսեան Սարին (լաւ յիշատակութեամբ), Վարդանեան Արմենուիի, Ճամպուլեան Վիգէն (բաւական լաւ յիշատակութեամբ), Կիլիկեան Տիրան (բաւական լաւ յիշատակութեամբ), Լոճիկեան Շանթ եւ Մանկասարեան Հրաշ (շատ լաւ յիշատակութեամբ)։

Կենսաբանական գիտութիւններ (4 աշակերտներէն 3ը).- Էսմէրեան Մարիա, Գալայճեան Դալար եւ Մարգարեան Կամար։

 **al-mashrek**
INSURANCE & REINSURANCE S.A.L.
Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.
(01)258228 – (01)268808
Fax: (01) 258223

www.hamazkayin.com

ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԻ ԽԶՈՒՄԸ ԱՀԱՒՈՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ ԿՈՒՆԵՆԱՅ

«ՀԱՅՈՑ ԱՃԽԱՐԸ»Ի ԸԱՐՑԱՋՐՈՅՑԸ՝ ԳՐՈՂ ԵՒ ԸՐԱՊԱՐԱԿԱՆՍՍ ՊԵՐՃ ԶԵՅԹՈՒՆՅԵԱՆԻ ԸՏՏ

ՀԱՐՑՈՒՄ.- Օրերս հետուստատետութեամբ հնչած ձեր կարն խօսքում հսկայական անհանգստութիւն, ու թող ներուի ասել, նաեւ հիաքափութիւն էր նկատուում։ Ի՞նչն է ձեզ յատկապէս անհանգստացնում։ Ինչո՞ւ։

ՊԱՏԱՍԽԱՆ.- *Ինձ անհանգստացրնում է նախ եւ առաջ այսօր Հայաստանում իշխող բարոյական մթնոլորտը։ Այն, ի հարկէ, մէկ օրում չի ստեղծուել։ Տասր տարուան պատմութիւն ունի։ Անկախացման հետ է ծնուել, եւ անբարոյականութեան շղթան սկսել է մեծանալ։ Հիմնականում սա՛ է ինձ անհանգստացնում։*

Գիտէիք, անշուշտ, որ անկախանալուց յետոյ Հայաստանը բարեկեցիկ կեանքով չի ապրելու, որ խորհրդային Միութեան փլուզումից յետոյ դժուար է լինելու միանգամից ինչ-որ դրական արդիւնքների հասնել։ Դա դիտէիք։ Բայց չգիտէիք, որ այժ աստիճանի վատ էր լինի։ Ինչո՞ւ այսպի վատ եղաւ։ Որովհետեւ երկրի իշխանութեան բարոյական հիմքերը խախուէին։ Այդ պատճառով է հիասթափութիւնը մեծ։ Ոչ թէ նրա համար, որ վատ ենք ապրում, այլ՝ այն պատճառների գիտակցումից, թէ ինչո՞ւ ենք վատ ապրում։

Հ.- Սովորաբար հիասքափում են, երբ մեն յոյսեր են կապում որեւէ երեւոյթի հետ։ Ի՞նչն է պատճառը մեր դէպքում։

Պ.- 1988ին ողջ ժողովուրդն էր ոտքի ելել։ Ամբողջ ժողովուրդն էր ողբելնչուած «Ղարաբաղ» կոմիտէի տղաներով եւ գրեթէ բոլորս նրանց անվերապահօրէն հաւատում էինք, այդ թւում՝ ես։ Հաւաք էլ եղել, որ բաց թողնում։ Միշտ տուն էի վերադառնում յուզուած, որ վերջապէս, կեանքիս օրօք, իմ սերնդին բախտ փիճակուեց տեսնելու մեր ազգի համախմբումը, տեսնելու ժողովրդին նուիրուած այդքան ազնիւ տղաների։ Ուրախանում էի, որ մեր մէջ այդպիսի մարդիկ են եղել եւ եկել, կարողանում են ժողովրդին առաջնորդել։ Դրանք մեր ժողովրդի ողբեղէն քարթօնքի պայծառագոյն օրերն էին...

...Պատմութիւն գիտեմ՝ որոշ չափով։ Գիտեմ, որ ժողովրդի անունից հանգէս եկող թրիքումները, որ պայծառ մարդիկ են թւում, իշխանութեան գալուց յետոյ դառնում են ճիշդ հակառակը։

Բայց այս անգամ, չգիտեմ ինչո՞ւ, խորուեցի։ Ասում էի. «Զէ՛, սրանք մե՛ր տղաներն են, հնարաւոր բան չէ, որ փոխուեն, փոխակերպուեն, ուրիշ մարդիկ դառնան...»։ Պարզուեց, որ այն էլ ինչպէս է հնարաւոր, եւ ես հիւսս ամաշուում եմ, որ պատմութեան դասերն իմանալով հանդերձ, չարաշար խարուեցի։

Հ.- Բայց 90ականների սկզբի այդ օրերը կարծեք արդէն պատմութիւն են դարձել...

Պ.- Պատմութիւն։ Ոչ, դա պատմութիւն չէ։ Ցաւօք, դա շարունակւում է։

Հ.- Յամենայնդեպս, 98ին փոխուեց իշխանութիւնը։ Սակայն այսօր էլ դուք հիասքափուած էք։ Ինչո՞ւ։

Պ.- Այո։ Հիմա էլ հիասթափուած եմ, եւ առ թէ՛ ինչո՞ւ։ Իշխանափոխութիւն կատուուեց, այո։ Ինչ-որ բաներ փոխուեցին, ի հարկէ։ Իշխանութեան հանգէպ ժողովրդի ատելութիւնը, որ կար նախկինում, հիմա կարծես չկայ։ Բայց այսօր կայ նոյնքան վատ բան՝ անտարբերութիւն։

Իշխանութիւնն իր համար է ապրում, ժողովուրդը՝ իր։ Միմեանց հետ ոչ մի կապ չունեն։ Եւ մէկը միւսով չի հետաքրքրւում։ Սա՛ է ցաւը։ Անտարբերութիւնը փոխադարձ է։ Ժողովուրդը տեսնում է, որ իր փիճակով, իր ցաւերով մտահոգուած մարդիկ չկան իշխանութեան մէջ եւ համարժէք վերաբերմունք է դրսււորում։

Միշտ մտածում եմ, թէ 1918-1920 թուականներին ի՛նչ պայծառ մարդիկ եկան իշխանութեան. Արամ Մանուկեան, Վրացեան, խաւոսեան, Շանթ, Աղբալեան, Ահարունեան...

Պայծառ, ազնուագոյն մարդիկ, որոնք իսկապէս նուիրուած էին ժողովրդին եւ անանձնական կեանքով ապրեցին։ Այն ժամանակ Հայաստանի փիճակն աւելի ծանր էր, քան այժմ, իսկ դժուարութիւններն էլ, ի դէպ, այդ

գործիչները չէին ստեղծել, ի տարբերութիւն մեր ժամանակների։ Եւ հիմա հարց եմ տալիս ինքս ինձ, ձեզ, ընթերցողին. «Ո՞ւր են։ Այդ որակի, այդ տեսակի հայերն ո՞ւր են այսօր։ Զկա՛ն։ Վերացա՛ն։ Ինչո՞ւ...»։ Գուցէ կան, չլիտեմ։ Բայց ո՞ւր են, ինչո՞ւ չեն երեւում։

Թերթերից մէկում վերջերս մի շատ ճիշդ բան գրուեց։ Ոչ թէ պէտք է իշխանութեան եկած անձանց տեղերը փոխել, այլ իշխանութեան տեսակը պէտք է փոխել։ Ուրիշ տեսակի իշխանութիւն պէտք է գայ։ Այսինքն՝ մտաւորական, ժողովրդին իսկապէս ծառայող, իրենց անձնականը մի կողմ դրած մարդկանց իշխանութիւն։ Այսօր Հայաստանում ծայրայեղ վիճակ է։ Պէտք է թեւերդ քշտած, գիշեր-ցերեկ աշխատես։ Հայաստանում պաշտօնը հանգստի, վայելքի տեղ չէ։ Պէտք է անձնականդ մի կողմ դնես, մոռանաս ու աշխատես։

Կարող եմք ասել, որ այսօր այդպէս է։ Ոչ, չենք կարող։ Շատ-շատերն անձնականը ոչ միայն չեն մոռացել, այլեւ մտածում են միմիայն անձնական բարեկեցութեան, սեփական զրպանը լցնելու մասին։ Ահա սա՛ է տարբերութիւնը 1918-20 թուականների եւ այսօրուան միջեւ։ Եւ էլի յանդում ենք նոյն խնդրին՝ բարոյականութեան անկում։

Հասարակութեան բարոյականութիւնը հեշտ է խաթարել։ Բարոյական մթնոլորտը վերականգնելն է անասելի դժուար։ Քանի որ հիմա պետութիւնը, իշխանութիւնն ու ժողովուրդն իրար հետ կապ չունեն, մեր հասարակութեան մէջ, ժողովրդի մէջ առաջին գիծ է մղուել ինքնապահպանման բնագդը, ինքն իրենով «Եոլա գնալու» հոգերանութիւնը։

Իսկ գիտէ՞ք, դա ինչի՞ է յանգեցնում։ Դա բերում է ռաքցոլիքովեան հոգեբանութեան արմատաւորմանը, որ «ամէն ինչ կարելի է»։ Բաւական է նաեւ շուրջըլուրդն ու զրա բազմաթիւ օրինակներ կը տեսնէք։ Ներուռեալ այս վերջին դաժան «բանգլադէշեան» յանցագործութիւնը։ Մարդիկ ապրում են «ամէն ինչ կարելի է» սկզբունքով։ Ռասքոլիքովեան հոգեբանութեամբ։

Հ.- Մի՞թէ նոյնը չէ «վերեւերում»։
Պ.- Դա փոխ կապակցուած է։ Մարդիկ պարզորոշ տեսնում են, թէ իշխանութիւններն ինչպէս են ապրում։ Եւ իրենք էլ իրենց հնարաւորութեան սահմաններում նոյն սկզբունքներով են փորձում ապրել։

Հ.- Այնուհանդերձ, վերադառնաճք հարցին. թէ ինչո՞ւ էք այսօր այդչափ մտահոգ։

Պ.- Բազմիցս ասել եմ, գրել, էլի եմ ասում, որ ներկայիս իշխանութիւններ պէտք է քաղաքական գնահատական տան հնի՛ն, նախորդ իշխանութիւններին։ Քանի դեւ այդ գնահատականը չի տրուել, ախտորոշումը չկայ, ուրեմն հիւանդութիւնը չի՛ էլ բուժուելու, այլ շարունակուելու է խորնալու։

Նախագահ Քոչարեանն ասում է, թէ չեն կարող քաղաքական գնահատական տալ, քանի որ դա պրուում չէ սահմանադրութեան մէջ։ Մեղմ ասած, շատ անյաջող միտք է։ Որովհետեւ ոչ մի երկրի սահմանադրութեան մէջ չի կարող գրուել, որ եթէ մի իշխանութիւն ժողովրդին թալանում է, կորցնում եւ աղքատութեան երկրն է հասցնում, ապա յաջորդը կարող է նախորդին գնահատական տալ։

Բացի այդ, հիմա էլ ինչ-որ բաներ են կատարւում, որոնց պատասխանը իշխանութիւնները չեն տալիս։ Ժողովրդը՝ հաշուետու չեն, ինչը հիասթափութեան եւս մէկ պատճառ է։

Իր հարցաթուղթից մէջ նախկին ղեկավարը անդրադարձած է թուրքերից եւ Ազրպէյճանի կողմէ Հայաստանի շրջափակումին եւ նշած է, թէ շրջափակումը կը վերցրէր Հարաբաշի տազնապի լուծման պարագային: Ան արտայայտուած է նաեւ Հայաստանի մէջ ռուսական ուժերու գոյութեան, Պաքո - Ժէյհան եւ Իրան - Թուրքիա բարիկշատարներու կառուցման կարելիութիւններուն մասին:

ՀԱՅ ԴԱՏ ԵՒ ՊԱՐԱՆՋԱՏԻՐՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԾՆՆԴՈՅԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՊՈՒՆ
ԿԸ ՀԱԼԱԾԷ ԹՈՒՐՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Թուրք այլախոհ պատմաբան Թաներ Աքչամի այս յօդուածը լոյս տեսաւ ֆրանսական «*Լը Մոնտ Տիփոն-մաթիք*» ամսաթերթի Յուլիսի թիւին մէջ:

Թ. Աբչան ցնցիչ ձգորտութեամբ կը բացայայտէ, որ Թուրքիան եւ թուրք ազգային ինքնութիւնը հիմնուած

են Հայկական Ցեղասպանության արարքին եւ ոճիրին ուրացումին վրայ: Թուրք պատմաբանին այս հաստատումը հզոր միջոց է Հայ Դատի աշխատողներուն համար: Թելավորելի է, որ այս յօդուածը թարգմանուի եւ տարածուի տարբեր լեզուներով:

վրա մեջ այս հարցին մասին
արտայայտու թիւններ
եղան. «Հայրենիքը փրկե-
լու համար մենք ընդունե-
նկատուելու ռիսքը»: Նահե-
պետ գիտեք, տեղահանու-
թողջ աշխարհի մէջ հա-
ստեղծեց եւ մեզ ոճրա-
տուաւ: Նախքան այդ քա-
գիտէինք, որ անկա մէր-
իւր քրիստոնեայ աշխարհ-
ատուելութիւնը: Ուրեմն ի՞ն-
կեցեցինք մարդասպաններ
լինչո՞ւ համար նախ-
դժուար, բայց նոյնքան
Պարզապէս որովհետեւ պե-
քալելի առնել, պահպանել
մերիքի գահը եւ ապագա
մեր շատ աւելի թափազան-
մեր սեփական կեանքերը:

«Լը Մոմտ Տիփլոմաթիք»ի Յուլիսի քիւիճ
գոյգ էջերը, ուր լոյս տեսած է Թաներ
Աբչամի յօդուածը:

րդարձան գրաւող ուժերուն հետ եւ ետ առին այն, ինչ որ իրենց կը պատկանէր: Այս պատճառով է, որ այս ունեւորները մօտեցան ազգային պատասխարութեան շարժումին եւ նոյնիսկ հռոմէ հոն իրենք նախաձեռնեցին ատոր կազմակերպումին: Անոնցմէ ոմանց կը հանդիպինք Մուսթաֆա Քեմալի մօտիկ շրջապատին մէջ ինչպէս՝ Թուփալ Օսման, որ պիտի դառնար ահոր պաճնական պահակաւոր զօրակցին պետը: Նոյեւ 8 Յունուար 1920ին Պոստոյ կառավարութեան կողմէ հայկական ինչքերուն պերտդարձին մասին տուած որոշումները ջնջուեցան 13 Մեպտեմբեր 1922ին: Անգարայի կառավարութիւնը որ գիտակցէր, թէ անհրաժեշտ էր պաշտպանել շահերն անոնց, որոնք մասնակցած էին ազգային պետութեան հիմնադրութեան:

«Քուվալլ Միլլիյէ»-ի առաջին ղեկատնւորն էր կազմակերպիչներուն եւ պատասխանատուններուն շարքին, Մարմարալի, Եգգականի եւ Սեւծովուն շրջաններուն մէջ ղեկատնիչ է ներկայ յուլիսը ջարդերուն մասնակցած ըլլալուն համար հետապնդուած անձերու, ասիկա երրորդ կապէն է հայկական ցեղասպանութեան եւ հանրապետութեան միջև: Դիմարկութեան շարժումին կազմակերպուիւն համար Մուսուս ֆա Բեմալ լայնօրէն ոգտուած է «Իքքիիսս վէ Թերաքքը» կուսակցութեան անդամ, հայերու դէմ ոճիրներու համար հետապնդուած անձերու գործած օժանդակութենէն: Հետագային ստոյն տրուեցան կարեւոր եւ պատասխանատու գործեր:

Օրինակը համար, Շիւքրու ֆայան՝ Մուսթաֆա ֆեմալի կողմէ հիմնական ժողովուրդը հանրապետական կուսակցութեան քարտեզը դրար, ինչպէս նաեւ ներքին պորթը նախարար, «տեղահանութեան» (չակերտցեմը)՝ Բեդի Գալիբ Էմ Էմ («Ա.») ժամանակ գործած էր իր բեւ գաղթական եւ թափառական քաղաքականութեան տեղաւորումով զբաղող բնդհանուր տնտեսին: Այս վարչութիւնը պաշտօնապէս պատասխանատու կը նկատուէր տեղահանութեան կազմակերպումին: Տեղւոյն վրա գտնուող գերմանացի հրկապտոսները կը տեղակայուէին Շիւքրու ֆայալի հետեւեալ խօսքը՝ «Պէտք է քննարկել հայկական գերը»:

Այլ անձնատուրութիւն մը՝ Մուսթաֆա Ապտիւհալիբ Ռենտա, ջարդերու ժամանակ եղած էր նախ Պիթլիսի եւ ապա Հայէպի կուսակալը: Գերմանացի Ռէօսլըր Հիւպատսըր գայն կը նկարագրէ իրեն մէկը, «որ անդուլ կերպով գորդած է Հայերու բնաջնջումով»: 1919 թիւ բարաւոր վկայութեան մէջ երրորդ գործածան հրամանատար Վեհիպ փաշա կ'ըսէ, թէ ինչպէ՛ս նոյն այս Ռինտան ողջ-ողջ այրել տուաւ Մուշի շրջանէն հագարաւոր տղամարդիկ: Հետագային նա եղաւ նախարար եւ Ազգային ժողովի նախագահ:

Տխրապեքիրի ջարդերը կազմակերպելուն համար Մալթայի մէջ թիւ 2743 թիւով բանտարկեալ Արիֆ Ֆեզլին 1922էն 1923 եղած է բարդաւաճումի նախարար: Թիւ 2805 բանտարկեալ՝ Ալի Ճինանի Պէյ, որ հարստացած էր ցեղասպանութեան փամանակ, 1924էն 1926 եղած է առեւտուրի նախարար: Նմանապէս թրիսթին Արաս, սպաննուած հայերու թաղումը ստանձնած, առողջապահական յանձնաժողովին անդամ, հետապոյսի Անգարայի մէջ վարած է կարեւոր պաշտօններ. ան եղած է արտաքին գործոց նախարար 1925էն 1938:

Մէկ խօսքով, ազգային անկախութեան պատերազմը մղելու համար Մուսթաֆա Բեմաօգտագործած է նաեւ «Խրքիմատ վէ Թերալը»՝ կուսակցութեան պատկանող տարրեր որոնք կը հետապնդուէին հայ եւ յոյն բնակչութեան դժուր ոճիւրներու համար, ինչպէս նաեւ անհատներ, որոնք միացած են դիմադրութեան՝ վախճալով յոյներու եւ հայերո վրէժխնդրութենէն: «Խրքիմատ վէ Թերալը» կուսակցութեան բոլոր հետապնդուած անդամներուն եւ յատկապէս նոյնք համար, որոնք կը պատանուէին ուղղակի ջարդերը գործադրող յատուկ կազմակերպութեան, անկախութեա պատերազմին մասնակցելը համարուէր վե պարտում: Անոնք կը գործուէին հետեւեալ տնտեսական առեւ. յանձնուի եւ ծանոթաց

Συνολ. 178



ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ
2001 - 2002 ԵՂԱՆԱԿԻ
ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՍԿՍԻ 25 ՕԳՈՍՏՈՍԻՆ

Սպանիոյ ախոյեան Ռէալ Մատրիտ 2001 - 2002 եղանակի բացման մրցումին, որ կը սկսի Օգոստոս 25ին, հիւրը պիտի ըլլայ Վալենսիայի:

Վստահարար այս մրցումը (որ պիտի ըլլայ անցեալ եղանակին կրկնութիւնը) պիտի ըլլայ այս հանգրժանի մրցումներուն ամէնէն հետաքրքրականը, մանաւանդ որ անկա պիտի ըլլայ առաջին ելոյթը, որուն ընթացքին սպանացի համակիրները առաջին անգամ ըլլալով դաշտին վրայ պիտի տեսնեն աշխարհի ամէնէն սուղ մարզիկը՝ Զինետին Զիտանը, որ փոխան 66 միլիոն տուարի Եռվենթուսէն միացաւ մայրաքաղաքի կազմին:

Անկասկած Ռէալ Մատրիտ 2001 - 2002 եղանակին «աւերներ» պիտի գործէ, որովհետեւ Զիտան իր կողքին պիտի ունենայ Ռաուլ Կոնցալէսը, Լուիս Ֆիկոն եւ Ռոպերթօ Բարրոսը, չափ մը այլ մարզիկներու կողքին:

Ռէալ Մատրիտի քերկրի պատասխանատուն՝ Խորխէ Վալտանօ երէկուան մէկ հարցազրոյցին ընթացքին յայտնեց, թէ ակումբը որոշած է դադրեցնել Վալենսիայի միջնապահ Կալզօ Մենտիթալի փոխանցման համար իր տարած աշխատանքները, որովհետեւ մտադիր չէ անոր ակումբին կողմէ պահանջուած 51 միլիոն տուարի գումարը վճարել:

27 տարեկան սպանացի միջազգային միջնապահ Մենտիթալ անցեալ շաբաթավերջին ըսած էր, որ կ'ուզէ հեռանալ Վալենսիայէն:


Ըստ սպանական մամուլին՝ Մենտիթալով հետաքրքրուած է Լացիօ Ռոմա եւ Կ'ուզէ անոր փոխանցման համար վճարել չուրջ 41 միլիոն տուար:

Վերադառնալով Սպանիոյ ախոյեանութեան բացման մրցումներուն, 2000 - 2001 եղանակին Բ. դասակարգի ախոյեան հանդիսացած Սելիլյա դժուար մրցում մը ունի կատարելիք, երբ ճակատի Պարսելոնայի դէմ, որ իր կարգին գորացած կը թուի ըլլալ նորեկ մարզիկներ՝ արժանթինցի յառաջապահ Խաւիէ Սալիոյայի եւ Պայէրն Միւնխի նախկին յետասպահ Փաթրիք Էնսերքսիի ժամանումէն ետք:

Սպանացի համակիրները եւ վստահարար աշխարհի տարածքին գտնուող ֆութպոլաքէը հարաբար կուրծնը պիտի սպասեն երկու «ոխերիմ» իշնամարտներուն՝ Ռէալ Մատրիտի եւ Պարսելոնայի միջեւ տեղի ունենալիք ճակատումը (11րդ հանգրուան), որ պիտի կատարուի «Սանթիակո Պալմայի»-ի մէջ՝ Նոյեմբեր 4ին: Դարձի մրցումը տեղի պիտի ունենայ «Նուրամփ»-ի մէջ՝ Մարտ 17ին:

ԹԵՆԻՍ

ՇԹԵՖԻ ԿՐԱՖ ՆՈՅԵՄԲԵՐԻՆ ՊԻՏԻ ԾՆՆ ԴԱԲԵՐԷ



Կրաֆ

Թենիսի աշխարհի բոլոր ժամանակներու մեծագոյն աստղերէն՝ գերմանացի Շթեֆի Կրաֆ յղի է եւ յառաջիկայ Նոյեմբերին պիտի ծննդաբերէ, կը հաղորդէ «Պիլ» օրաթերթը:

32 տարեկան Կրաֆ եւ անոր ընկերը՝ ամերիկացի թենիսիստ Լիստի Լիկայի երկու տարիէ ի վեր կը կենսակցին, սակայն մտադիր չեն պաշտօնապէս պսակուելու:

Կրաֆ, որ իր ասպարէզին ընթացքին 22 կրան 21էմ տիտղոսի տիրացած է եւ թիւ 1 մնալու մրցանիշ հաստատած է (378 շաբաթ), իր ժամանակին մեծ մասը այժմ կ'անցընէ Գերմանիայէն հեռու: Ան վշտացած է գերմանական մամուլէն, ինչպէս նաեւ՝ իշխանութիւններէն, որովհետեւ հորը հարցով ինք եւս բաւական խնդիրներ ունեցաւ անոնց հետ: Շթեֆիի հայրը՝ Փիթըր Շթուքկարթի մէջ 2 տարի բանտարկուեցաւ՝ տուրքերէ խուսափած ըլլալու յանցանքով:

Շթեֆի Կրաֆ 1999ին լքեց ասպարէզը եւ գրեթէ հաստատուեցաւ Զիլրիտա, Միացեալ Նահանգներ:

«Պունթ» գերմանական թերթին համաձայն՝ Շթեֆի եւ Լիկայի (31 տարեկան) կրնան ամսական 1 միլիոն պատկուիլ, Զիլրիտայի մէջ, ուր հաւանաբար ներկայ ըլլան նաեւ անոր հայրն ու մայրը միատեղ. անոնք երկար ատենէ ի վեր բաժնուած են եւ այդ օրէն ասդին բնաւ միասին չեն եղած:

«ԶՈՓԱ ԱՄԵՐԻԷԱ»
ՇՈՆՏՈՒՐԱՍ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԱՌԱՋԻՆ
ՅԱՂԹԱՆԱԿԸ

«Քոփա Ամերիկա»

մրցաշարքին, Շոնտուրաս, որ փոխարինած էր Արժանթինը, արձանագրեց մրցաշարքի իր առաջին յաղթանակը, 2-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Պոլիվիան (Գ. խմբակ). այս վերջինը կրեց իր երկրորդ պարտութիւնը եւ այժմ առանց կէտի կը գրաւէ խմբակին վերջին դիրքը:

Շոնտուրասի երկու կողերը նշանակեց Ամատո Կուէվարա (54րդ եւ 69րդ), մինչ Պոլիվիա մրցումը աւարտեց ինը մարզիկով՝ Մարքօ Սէնտիի եւ Միլթրի: Քուսմալայի կարմիր քարտ ստանալէն ետք (Բ կիսախաղին):

Քուսմա Ռիքա - Ուրուկուէ մրցումը վերջ գտաւ 1-1 արդիւնքով: Քուսմա Ռիքայի կողմէ նշանակեց Մանչեսթըր Սիթիի մարզիկ Փաուլօ Վանչոփի (28րդ), իսկ Ուրուկուէյի հաւասարութեան կողմէ՝ Քարլոս Մորալէս (53րդ):

Տեղի ունեցած այս երկու մրցումներէն ետք, այժմ երեք խմբակներուն մաս կազմող 12 խումբերն ալ կատարած են երկուքական մրցում: Անոնք տակաւին մէկական մրցում ունին կատարելիք, որմէ ետք կը յստականան քառորդ աւարտականին հասնող ութը խումբերը:

ԷՐԻՔՍԸՆ ՄՈՆՏԻԱԼԻ ՏՈՄՍԻՆ ԳՐԱԻՐ
ԿԸ ԴՆԷ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԴԷՄՄՐՅՈՒՄԻՆ ՎՐԱՅ

Անգլիոյ ֆութպոլի ազգային խումբին մարզիչը Սկէն Կորան Էրիքսըն, որ այժմ իր երկրին Շուէտի մէջ արձակուրդը կ'անցընէ, շարժապիկորէն հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ եթէ Անգլիա կ'ուզէ ձափոնի եւ Հարաւային Գորէյի իր տոմար ապահովել, պէտք է անպայման յաղթական վերադառնայ յառաջիկայ Սեպտեմբեր 1ին, Միւնխի մէջ Գերմանիոյ դէմ իր կատարելիք 2002ի Մոնտիալի գտումի մրցումէն:

Գերմանիա այժմ 16 կէտով կը գրաւէ Թ. խմբաւորի պարագլուխը դիրքը, իսկ մէկ մրցում նուազ կատարած Անգլիա՝ 10 կէտով 2րդ դիրքը:

Էրիքսըն, որ անցեալ Յունուարին նշանակուեցաւ Անգլիոյ մարզիչ, փոխարինելով Քեփին Բիլլընը, ցարդ կատարած է հինգ մրցում եւ անոնց բոլորին ալ յաղթանակ արձանագրած:

Էրիքսըն կը յայտնէ, թէ վստահարար Գերմանիոյ դէմ կատարելիք մրցումը պիտի ըլլայ դժուար, մանաւանդ որ անիկա տեղի պիտի ունենայ Գերմանիոյ մէջ, սակայն այս մէկը չի նշանակեր, որ հոնկէ յաղթական վերադառնալը դժուար առաքելութիւն մըն է:

«Գերմանիա ունի զօրաւոր խումբ մը: Մեզի կը մնայ մեր ամէն կարելին ընել առաւելագոյն արդիւնքը արձանագրելու համար անոր դէմ եւ ինչու ոչ՝ բոլոր մըն ալ բախտ ունենալ», կ'ըսէ Էրիքսըն:

Իր հարցազրոյցը եզրափակելով, Էրիքսըն ըսաւ, որ Անգլիոյ ֆութպոլի ֆետերասիոնին հետ ստորագրած է հինգ տարեւան պայմանագրութիւն մը: Ան իր ամէն կա-



Փաուլօ Վանչոփ

Ստորեւ՝ Գ. խմբակին դասաւորումը.	ԿԵՏ
1.- Քուսա Ռիքա	4 (2-1)
2.- Ուրուկուէյ	4 (2-1)
3.- Հոնտուրաս	3 (2-1)
4.- Պոլիվիա	0 (0-3)

Ստորեւ՝ Ա. հանգրուանին մնացեալ մրցումներուն յայտագիրը:

Ա. ԽՄԱԿ (ԱՅՍՕՐ)
Էքուատոր - Վենեսուելա
Քոլումպիա - Չիլի
Բ. ԽՄԱԿ
Փերու - Մեքսիքա
Պարագվայ - Փարակուէյ
Գ. ԽՄԱԿ
Պոլիվիա - Քուսա Ռիքա
Հոնտուրաս - Ուրուկուէյ

ՊԵՔԸՆ ՊԱՌԻՐ. ԳԵՐՄԱՆԱ ՊԻՏԻ ՅԱՂԹ ԱՆՂԼՈՅ

Գերմանիոյ ֆութպոլի ազգային խումբին նախկին մարզիչը եւ խմբագրութեան մը ընթացքին ըսաւ, որ յառաջիկայ Սեպտեմբեր 1ին, Միւնխի մէջ տեղի ունենալիք Գերմանիա - Անգլիա մրցումին յաղթանակը (2002ի Մոնտիալի գտում) պիտի ըլլայ իր երկրին ֆութպոլի ազգային խումբը, թէեւ Անգլիոյ մարզիչ Սկէն Կորան Էրիքսըն լաւական ինքնափստահ կը թուի ըլլալ, մանաւանդ իր կազմին արձանագրած վերջին հինգ յաղթանակներէն ետք:

Յաղթանակի մը պարագային, Անգլիա յոյս պիտի ունենայ Գերմանիոյ հետ պայքարելու գտումի մրցումներուն աւարտին պարագլուխը դիրքը գրաւելու համար, նկատի ունենալով, որ իւրաքանչիւր խմբակի պարագլուխը դիրքը գրաւող խումբը կ'ապահովէ 2002ի Մոնտիալին իր տոմարը:

ԱՍԻԱԿԱՆ ԻՐ ՇՐՁԱՊՈՅՏԻՆ ԸՆԹԱՅԻՆ

ԼԻՎԸՐՓՈՒԼ 2 - Օ ԱՐԴԻՒՆՔՈՎ
ՅԱԼԹԱՆԱԿ ՄԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ

Պատրաստուելու համար Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութեան 2001 - 2002 եղանակին, Լիվըրփուլ ձեռնարկած է ասիական շրջապտոյտի մը:

Անգլիական կազմը իր առաջին ֆութպոլի լարեկամական մրցումը կատարեց Սինկափուրի հաւաքականին դէմ, որուն մէծ մասը ազգային խումբին մարզիկներն են:

Հակառակ անոր որ Լիվըրփուլ յաջողեցաւ աւելի քան 48 հազար համակիրներու ներկայութեան 2 - 0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրել, սակայն Լիվըրփուլի մարզիչ Ժերար Զուլիէի իսկ հաստատումով իր մարզիկները չկրցան տալ իրենցմէ սպասուած արդիւնքը, մանաւանդ յառաջապահ Գիլը, որ կը տառապէր ֆիւրիոյնի պակասէ: Սակայն հակառակ այդ մէկին, Լիվըրփուլ յաջողեցաւ երկու կողմ նշանակել, շնորհիւ էմիլ Բէպքիի (41րդ) եւ Մալքը Օուլընի (88րդ):

Լիվըրփուլ այժմ պիտի ուղղուի Թայլանտ, ուր կ'աղմկէ Զինգալթի Պանթրի մէջ ֆութպոլի ալ լարեկամական մրցում մը պիտի կատարէ:

ՖՈՐՄԱԿԱՆ 1

ՄԻՔԱՅԷԼ ՇՈՒՄԱԽԸՐ ՄԵԾ ԱՐԿԱԾ ՄԸ ՈՒՆԵՑԱԻ



Շումախերի ինքնաշարժը՝ երէկուան արկածէն ետք:


Երեք անգամ Յորմիլա Դի աշխարհի ախոյեան հանդիսացած գերմանացի Միքայել Շումախըր (Յետարի) երէկ անվնաս դուրս եկաւ մեծ արկածէ մը. երբ ան փորձեր կը կատարէր Մոնպալի մէջ:

Բարձր արագութեամբ սուրացող Շումախըր իր ինքնաշարժը չկարենալով վսպել՝ բախեցաւ Մոնպալի շրջավայքին պատերուն: Անոր ինքնաշարժը փակցաւ:

Շումախըր անմիջապէս փոխադրուեցաւ հիւանդանոց, սակայն շատ արագ դուրս եկաւ հոնկէ, որովհետեւ անոր ոչինչ պատահած էր:

ՀԵԾԵԼԱՐԸՆԻ. ՅՐԱՆՍԱՅԻ ՇՐՁԱՎԱՋԲ

ԱՐՄՍԹՐՈՆԿ ՈՒՆԵՑԱԻ
ԲԱՑԱՌԻԿ ԵԼՈՅԹ ՄԸ
ԵՒ ՇԱՀԵՑԱԻ 10ՐԴ
ՀԱՆԳՐՈՒԱՆԸ



Լէնս Արմսթրոնկ, որ առաջնիցն կը հասնի ժամանան գիծ:

Ամերիկացի Լէնս Արմսթրոնկ երէկ փառաւոր ելոյթով մը շահեցաւ Ֆրանսայի շրջավայքին 10րդ հանգրուանը, որ տեղի ունեցաւ Էքս Լէ Պէնէն Ալի տ'Հիւէյ (209 քմ.):

Վերջին երկու տարիներուն նոյն այս հանգրուանը շահած Արմսթրոնկ, լեոնային այս մրցումին ժամանան գիծ հասաւ առանձինն եւ բաւական հանգիստ դիրքի մը վրայ, որովհետեւ իր ամէնէն մօտիկ մրցակիցին՝ գերմանացի Էան Ուրիշի վրայ ձեռք ձգեց շուրջ երկու վայրկեան առաւելութիւն: Երրորդ հանդիսացաւ հոսեպա Պելոքի (Սպանիա), իսկ չորրորդ՝ Քրիսթֆ Մորո (Ֆրանսա):

Ֆրանսացի Ֆրանսուա Սիմոն երէկ թէեւ գրաւեց 29րդ դիրքը, սակայն ան յաջողեցաւ Շթիուրթ Օկրէտիէն (Աւստրալիա) խլել ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը եւ հազնիլ Գեղին շապիկը:

Նշենք, թէ լեոնային այս հանգրուանին նախօրեակին Արմսթրոնկ խոստացած էր անխնայ գտնուիլ իր մրցակիցներուն նկատմամբ եւ այդպէս ալ պատահեցաւ եւ ան յաջողեցաւ շախիլ Ֆրանսայի շրջավայքին լեոնային այս առաջին հանգրուանը:

Ան աւելցուց ըսելով, որ այժմ իր առաջնահերթ նպատակը պիտի ըլլայ գրաւել ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը, թէեւ այժմ 20 վայրկեանի տարբերութեամբ ետ կը մնայ Սիմոնէն:

Ստորեւ՝ 10րդ հանգրուանին արդիւնքները (այսօր տեղի կ'ունենայ 11րդ հանգրուանը՝ Կորնուպէն Շամրուս (32 քմ.), որ պիտի լրջալ ժամացոյցի դէմ մրցուի).

- 1.- Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.). **ԵՆԸ. Էս. Փոսթալ 6** ժամ 23' 47"
- 2.- Էան Ուրիշ (Գերմանիա) **Տեթյ Թելեքոմ 1'** 59" ու2
- 3.- Խոսեպա Պելոքի (Սպանիա) **ՕՆԷ-Էրոսքի 2'** 09" ու2
- 4.- Զորիսթօֆ Մորո (Ֆրանսա) **Տեթրինա Ուոչքըր 2'** 30" ու2
- 5.- Օսքար Սելիլա (Սպանիա) **Էելմէ-Էոսթա Պալմա 2'** 54" ու2

Ընդհանուր դասաւորում.

- 1.- Ֆրանսուա Սիմոն (Ֆրանսա) **Պոմօր 45** ժամ 34' 09"
- 2.- Անտրէ Զիվիլե (Ղազախստան) **Զոֆիտիս 11'** 54" ու2
- 3.- Շթիուրթ Օկրէտի (Աւստրալիա) **Բերտի Ալիքի 18'** 10" ու2
- 4.- Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.). **ԵՆԸ. Էս. Փոսթալ 20'** 07" ու2
- 5.- Խոսեպա Պելոքի (Սպանիա) **ՕՆԷ-Էրոսքի 21'** 42" ու2

